

ՊԱՏՄԱԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ



ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

պատրաստող գիր. դոկտոր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ԿՐԿԻՆ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՎՃՅՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՅԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ



. դարասկզբին՝ ազգային գրի գիւտից գրեթէ անմիջապէս յետոյ սկզբնաւորուած Հայոց կանոնական գրականութիւնը, բիւզանդական եւ ասորական գրաւոր իրաւունքի յուշարձանների կողքին, ողջ միջնադարում իր ծանրակշիռ նպաստը բերեց քրիստոնեայ Արեւելքի իրաւական մշակոյթի զարգացման գործում: Այդ գրականութեան մէջ Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի կաթողիկոսի համախմբած «Կանոնագիրք Հայոց» ժողովածոն առանձնայատուկ տեղ է գրաւում թէ՛ իրաւագիտական, թէ՛ բնագրագիտական եւ աղբիւրագիտական տեսանկիւնից: Շարունակելով հայ եւ օտարազգի իր նախորդների աւանդները՝ Յովհաննէս Օձնեցին Ը դարում ի մի բերեց, լրացրեց եւ խմբագրեց Հայաստանում տարբեր աստիճանի գործառութիւն ունեցող շուրջ երեքուկէս տասնեակ կանոնական յուշարձաններ ու սկիզբ դրեց դրանց միատեղուած եւ համակարգուած օգտագործմանը: Հետագայ դարերում նրա ժողովածոն պարբերաբար հարստացուեց նոր նիւթերով եւ համակարգման նոր տարրերով՝ մշտապէս պահպանելով իր արդիական կիրառականութիւնը:

ԺԹ դարի երկրորդ եւ Ի դարի առաջին կէսին «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի գիտական ուսումնասիրութիւնը եւ մասնակի հրատարակութիւնները (Հ. Յ. Գաթըրճեան, Յ. Տաշեան, Ա. արք. Մխիթարեան, Մ. արք. Օրմանեան, Ա. Ղլտեան, Ս. Տիգրանեան, Հ. Ն. Ակիւնեան եւ այլք) բացայայտեցին մի քանի տասնեակ գրչագիր օրինակների պատկանելութիւնն առանձին ձեռագրախմբերի եւ խմբագրութիւնների՝ օձնեցիական սկզբնօրինակն արտացոլելու իրենց ուրոյն հնարաւորութիւններով: Ի դարի երկրորդ կէսին նախորդ հետազօտողների հիմնական եզրայանգում-

ների ամփոփման եւ 60-ից աւելի գրչագրերի մանրակրկիտ համեմատութեան հիման վրայ բազմավաստակ Վազգէն Յակոբեանի աշխատասիրած «Կանոնագիրք Հայոց» վերտառութեամբ երկու հատորներից¹ առաջինը յաւակնում էր ամբողջացնելու Յովհաննէս Օձնեցու կանոնական ժողովածոյի գիտաքննական հրատարակութիւնը: Սակայն ձեռագրական նիւթի ամբողջական եւ մանրակրկիտ վերլուծութիւնը ցոյց տուեց մեզ, որ այդ հրատարակուած բնագիրն իրականում արտացոլում է ոչ թէ «Կանոնագիրք Հայոց»-ի օձնեցիական նախօրինակը, այլ՝ վերջինիս հետագայ վերամշակումների արդիւնքում ի յայտ եկած տարբերակներից մէկը՝ ներկայացուած Կանոնագրքի հնագոյն գրչագրում (Նոր Զուղայի հ^{մբ} 131, 1098 թ., այսօր օգտագործւում է *A* տառանիշով) եւ նրան յարող ձեռագրախմբերի օրինակներում:

Ըստ Ս. Տիգրանեանի, Ն. Ակինեանի, Վ. Յակոբեանի ու նրանց կրկնող մերօրեայ մասնագէտների՝ հնագոյն գրչագրի եւ Ա անուանուած ձեռագրախմբի առաջին 24 կանոնախմբերը (մինչեւ Յովհաննէս Օձնեցու 32 յօդուածից բաղկացած կանոնները ներառեալ) ուղղակիօրէն արտացոլում են օձնեցիական կանոնական ժողովածոն, որին հետագայում աւելացուել են շուրջ մէկուկէս տասնեակ այլ բնագրեր, իսկ Ժ դարավերջին հաւաքուած 38-40 կանոնախմբերի՝ ինչ-որ պատճառով վերադասաւորման արդիւնքում կազմուել է մեզ հասած Բ ձեռագրախմբի՝ նոյնպէս ընդհանուր յօդուածահամարակալում եւ առարկայական ցանկ ունեցող գրչագրերի նախագաղափար օրինակը, որտեղ Յովհաննէս Օձնեցու կանոնները գրուած են 37-րդ տեղում²: Ինչ վերաբերում է մէկ տասնեակից աւելի այն գրչագրերին, որոնք չեն պատկանում «Կանոնագիրք Հայոց»-ի Ա եւ Բ ձեռագրախմբերին (այդ թւում մասնագէտներին բաւականին ծանօթ ՄՄ հ^{մբ} 659 կամ ըստ Կարինեան ցուցակի՝ Ս. Էջմիածնի մատենադարանի հ^{մբ} 751 գրչագիրը՝ ընդօրինակուած Կաֆայում, 1368 թ.) եւ մասնաւորապէս չունեն ընդհանուր ու առարկայական ցանկեր, ապա դրանք գնա-

¹ «Կանոնագիրք Հայոց», աշխատ.՝ Վ. Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964, հտ. Բ, Երեւան, 1971:

² Տե՛ս **С. Тигранян**, Древнеармянская книга канонов. Очерки описания и исследования памятника. I. Описательная часть, Петроград, 1918. **Ն. Ակինեան**, Թուղթ Սակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց Յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930. Նոյն հեղինակի՝ «Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու. Մատենագրական ուսումնասիրութիւն», Վիեննա, 1950. «Կանոնագիրք Հայոց», աշխատ.՝ Վ. Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964. **Ն. Վարդանեան**, Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի կազմաւորումն ու հետագայ խմբագրութիւնը 78 կանոնախմբերի սահմաններում, ՊԲՀ, 2014, թիւ 3, էջ 130-139. Նոյն հեղինակի՝ «Գետիկ Երզնկացիի եւ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, ԲԵՀ, 2015, թիւ 2, էջ 55-59:

հատուել են իբրեւ պարզապէս «Կանոնագրքի» հետագայ համառօտման արդիւնք (Վ. Յակոբեանը չի տալիս նրանց ամբողջական համեմատութիւնը՝ բաւարարուելով լոկ հատորների ծանօթագրութիւններում որոշ ուշագրաւ ընթերցումներ ներկայացնելով):

Այնինչ՝ թէ՛ Վ. Յակոբեանը, թէ՛ նրան նախորդող եւ յաջորդող բազմաթիւ ուսումնասիրողներ զանազան առիթներով նկատել են, որ ՄՄ հ^{մբ} 659 եւ միւս՝ Ա եւ Բ ձեռագրախմբերից տարբերուող գրչագրերը պարունակում են կանոնական «լրացուցիչ» նիւթեր կամ յայտնի կանոնախմբերի «լրացուցիչ» հատուածներ, որոնք շատ դէպքերում առաւել մեծ համապատասխանութիւն են դրսեւորում առանձին կանոնախմբերի այլալեզու կամ հայերէն յայտնի կամ վերականգնուող բնօրինակների հետ³: Մանրակրկիտ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ ամենեւին արդարացուած չէ դրանք թեթեւօրէն համարել հետագայ միջամտութիւնների արդիւնք (ինչպէս որ չխորանալով խնդրի աղբիւրագիտական եւ ձեռագրախմբերի ճիւղագրութեան տրամաբանութեան մէջ՝ ըստ էութեան արել են Ն. Ակինեանը եւ Վ. Յակոբեանը), քանի որ հնարաւոր չէ, որ աղբիւրների վերհանման ու ներառման նման աշխատանքը կատարուէր «օձնեցիական» առաւելագոյնս համակարգուած բնագրի ապադասականացուած եւ պակասաւոր ծաւալի վրայ: Հետեւաբար պարզ է, որ Յովհաննէս Օձնեցու կազմած կանոնական հաւաքածոյին առաւել հարազատ է մնացել հէնց ՄՄ հ^{մբ} 659 (նաեւ վերջինիս շատ մօտ, թէեւ էապէս աւելի համառօտ ՄՄ հ^{մբ} 657) գրչագրում ներկայացուած տարբերակի այն մայրօրինակը, որը հետագայում լրացումներ ստանալով եւ դասականացման միտումով պակասեցուցելով՝ հիմք է դարձել ընդհանուր յօդուածահամարակալումով ու համակարգման այլ տարրերով օժտուած «դասական» կանոնագրքի խմբագրման համար:

Ընթերցումների ամբողջական համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Յովհաննէս Օձնեցու կանոնական հաւաքածոյի սկզբնագիրը, առանց արմատական խմբագրումների, մեզ է հասել ոչ միայն ՄՄ հ^{մբ} 659 եւ 657 գրչագրերում (մեր արդէն պատրաստած նոր գիտաբնական բնագրում, հետեւելով Ս. Տիգրանեանին՝ ներկայացնում ենք դրանք E եւ e₁ տառանիշերով) եւ Վ. Յակոբեանի աշխատասիրութեան Ա. հատորի յաւելուածում հրատարակուած Բ պատառիկում (ներկայացուած է P տառանիշով), այլ

³ Տե՛ս Մ. Շիրինեան, Գ. Մուրադեան, Յունարէնից թարգմանուած եկեղեցական կանոնները. Բնագրագիտական դիտողութիւններ, ՊԲՀ, 2000, թիւ 3, էջ 213-225. A. Mardirossian, Le livre de canons Arméniens (Kanonagirk' Hayotc) de Yovhannes Awjenc'i: Église, droite et société en Arménie du IV^e au VIII^e siècle, Lovanii, 2004, էջ 504-505:

նաեւ ընդամենը 7 կանոնախումբ ընդգրկող մի համառօտ «Կանոնգրքի» տարբերակում. վերջինս մեզ է հասել ՄՄ հ^ր 835, 837, 2576, 7060, 8459, 9311 (բոլորը՝ ԺԶ-ԺԷ դդ.) եւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի հ^ր 472 (ԺԸ դ.) գրչագրերում (այս խմբի նախագաղափար օրինակի վերականգնողը ընթերցումները նշանակել ենք e_2): Այդ տիպի «չխմբագրուած» մի ձեռագիր է զուգադիր օգտագործել դասական խմբագրութեան Բ ձեռագրախմբի K_b ենթախմբի մայր օրինակի գրիչը (նկատուած կտորների ընթերցումները նշանակելու ենք Z_b), որի շնորհիւ հէնց այդ ենթախմբում պահպանուել է Յովհաննէս Օձնեցու Յիշատակարանը: Նոյնատիպ օրինակներից զուգադիր օգտուելու հնարաւորութիւն են ունեցել նաեւ A-ից արտագրուած n (ՄՄ հ^ր 778՝ 1621 թ., Կամենից) եւ T (ՄՄ հ^ր 9488՝ 1635 թ., Լուով) ձեռագրերի գրիչները, ինչպէս նաեւ A-ում մի կորած թերթի բնագիրը մօտաւորապէս նոյն ժամանակ լրացրած անանուն վերականգնողը (վերջին կտորների ընթերցումները նշանակելու ենք՝ Z_T եւ Z_A):

Ըստ E, e_1 գրչագրերի եւ e_2 ենթախմբի պարունակած նիւթի հիման վրայ ամփոփուող պատկերի՝ Յովհաննէս Օձնեցին իր ժողովածոյում ընդգրկել է «Առաքելական» կոչուած 3 եւ Թադէոս ու Փիլիպպոս առաքեալներին վերագրուած մէկական կանոնախմբեր, «Նիկիական» զոյգ հաւաքածոները, Գանգրայի, Անտիոքի (իրականում՝ Լաւողիկէի), Կոստանդնուպոլսի, Եփեսոսի (2, նաեւ Սեւանտոսի թղթի տարբերակով) եւ Շահապիվանի ժողովների կանոնները, դասական հայրերից՝ Բարսեղ Կեսարացու (4), Աթանաս եւ Կիլրեղ Աղեքսանդրացիների, Եփրեմ Ասորու եւ Եպիփան Կիւրացու (մէկական), հայ վարդապետներից՝ Գրիգոր Լուսաւորչի (2), Սահակ Պարթեւի (6), Եղիշէի (1) եւ Յովհան Մանդակունու (2) կանոնական երկերը, որոնց նա աւելացրել է իր 32 կանոնները՝ դրանց «յառաջաբանուած» «Ատենաբանութեամբ» հանդերձ, եւ վերջապէս՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից» կոչուած ընդհանուր նախադրութիւնը⁴: Այդ 36 կանոնախմբերի մեծ մասը նա օժտել է յօդուածների համառօտ վերնագրեր ընդգրկող գլխացանկերով եւ աւարտել աշխատանքն իր Յիշատակարանով: Այսպիսի ծաւալով «Կանոնագիրք Հայոց» ժողովածոն ամփոփում էր Հայաստանում Ե-է դդ. ձեւաւորուած կանոնական աւանդոյթի էական մասը եւ պատասխաններ պարունակում Ը դարի հայ հասարակութեան գործառութեան փաստօրէն բոլոր խնդիրների վերաբերեալ:

⁴ Նրա առանձին հրատարակութիւնը տես Ա. Յակոբեան, Յովհաննէս Օձնեցու նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից» Յովաննու Վերծանալոյ», «Հանդէս ամսօրեայ», ՃԻ տարի, Վիեննա-Երեւան, 2006, սն. 91-130:

Կաթողիկոս Յովհաննէս Օձնեցու (717-728 թթ.) կողմից «Կանոնագիրք Հայոց»-ի համախմբման տարիները յաջողուում է ճշգրտել հեղինակի Յիշատակարանի եւ մէկ այլ՝ «Սակա ժողովոցն, որ եղեն ի Հայս» վերտառութեամբ երկի տեղեկութիւնների համադիր քննութեամբ: Հայոց թուականութեան ճշե տարում գումարուած Մանագկերտի ժողովից անմիջապէս յետոյ, այսինքն՝ նոյն 726 թ. գրուած վերջին երկի՝ մեր կողմից կազմուած գիտաքննական բնագիրը (7 գրչագրերի համեմատութեամբ)⁵ թոյլ է տալիս վերջնականապէս յաղթահարել գրականութեան մէջ թեթեւօրէն արծարծուած այն կարծիքը, թէ «Սակա ժողովոցն»-ը, չնայած գրողի ուղղակի հաւաստիացումներին («Ահաւասիկ ես՝ Յովհաննէս Հայոց կաթողիկոս, գրեցի իմով ձեռամբ զայս կանոնս...»), շարադրանքի որոշ անփութութեան պատճառով չի կարող համարուել Յովհաննէս Օձնեցի գիտնական հայրապետի հարազատ ստեղծագործութիւնը: Նման մտայնութիւնը գալիս է բանաւոր խօսք յիշեցնող անմիջականութեամբ տողորուած երկի հպանցիկ ընթերցանութիւնից եւ շտապողական գնահատականից՝ որպէս հէնց ժողովների մասին պատմական աշխատութիւն: Իրականում իր համար կարեւոր վերջին՝ Մանագկերտի ժողովի դաւանական գլխաւոր խնդիրը հանգամանալից ներկայացնելուց յետոյ հեղինակը ոչ պակաս հանգամանալիօրէն (բնագրի ամբողջ երկրորդ կէսում) մտքեր է շարադրում ութ (կամ ինը) խնդիրների վերաբերեալ, որոնք ինչ-որ չափով նմանում են ընդարձակ մեկնաբանուած կանոնական դրոյթների: Հեղինակային նոյնատիպ մօտեցում նկատուում է նաեւ Յովհաննէս Օձնեցու՝ «Ատենաբանութիւն» անուանուած երկում⁶, որտեղ եւս 17 կանոնական դրոյթներ շարադրուած են ընդարձակ մեկնաբանուած եղանակով, ընդ որում դրան յաջորդում են բուն 32 կանոնները: Սա թոյլ է տալիս «Սակա ժողովոցն» գրուածքն իր իւրայատուկ կառուցուածքով ու ոճով գնահատել որպէս նաեւ սկիզբը եւ խթանը հեղինակի գաղափարի՝ շարադրելու սեփական կանոնախումբը՝ ներառելով այն (նախադիր «Ատենաբանութեան» հետ միասին) կանոնական ընդհանուր հաւաքածոյում:

Իսկ վերջինիս համախմբումը Յովհաննէս Օձնեցիի ձեռնարկել էր դեռ եւս հայրապետ դառնալու նախօրեակին, ինչը բառացի նշուած է իր Յիշատակարանում («Ուրանաւր եւ զիս աստուածային Հոգին վերակար-

⁵ **Յովհան կաթողիկոս Օձնեցի**, Սակա ժողովոցն, որ եղեն ի Հայս, գիտաքնն. բնագիրը՝ Ա. Յակոբեանի, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԳ տարի, Վիեննա-Երեւան, 2009, սն. 61-107:

⁶ Երկի հրատարակութիւնը տէն «Յովհաննու Իմաստասիրի Աւանցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ - Ս. Ղազար, 1833. այս բնագրի ընթերցումները մեր կազմած գիտական բնագրում նշում են V₀ տառանիշով:

գեաց յաթոռ սրբոյն Գրիգորի, ի կաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց»): Այնտեղ ասուածից երեւում է նաեւ, որ սկզբնապէս խնդիրը դրուած է եղել բաւականին համեստ յաւակնութեամբ. քանի որ կանոնադիր սուրբ հայրերի գործերը ցրուած են այլուր («վասն զի ոմանք առ ոմանս, եւ ո՛չ ամենեքեան առ ամենեսեան սոքա սերմանեալք»)- միատեղել դրանք մէկ մատեանում՝ կաթողիկոսարանում պահելու նպատակով («կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոն[վ]նական սահմանեալ բան ի միում տեղ-ւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել»): Ի դէպ, Յովհաննէս Օձնեցին լուծել է նմանատիպ մէկ այլ խնդիր եւս. «Սակա ժողովոցն» երկի աւարտական, փոքր-ինչ խաթարուած մի հատուածում («...այս աւանդ կացցէ՛ ի վիճակիս մերում, եւ այս մատենագիր եղիցի՛ ամենայն Հայաստանեայց, որք ընդ ձեռամբ մերով հաւանեալ կան ի պահեստի») ձեռագրերի պահպանած «հաւանեալ» բառի փոխարէն վերականգնելով «հաւաքեալ»՝ տեսնում ենք, որ խօսքը վերաբերում է նրա կողմից Հայոց կաթողիկոսարանում դաւանական երկերի մի այլ հաւաքածոյի ստեղծմանը: Այս հիմքերը բաւարար են թւում՝ պնդելու, որ սեփական կանոնների շարադրումը Յովհաննէս Օձնեցին կատարել է Մանագլերտի ժողովից յետոյ՝ կեանքի վերջին երկու տարիներին, սակայն դա եղել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի համախմբման՝ մէկ տասնամեակից աւելի տեւած ծաւալուն աշխատանքի աւարտման եւ, անշուշտ, ամփոփման-խմբագրման ժամանակը:

Քանի որ, բացի K_b ենթախմբից, ոչ մի այլ գրչագիր չունի Յիշատակարանը, պէտք է մտածել, որ այն գրուել է «Կանոնագիրք Հայոց»-ի հեղինակային օրինակի վերջում՝ արդէն այն բանից յետոյ, երբ Յովհաննէս Օձնեցու աշակերտներն այդ մատեանից գոնէ մէկ արտագրութիւն էին կատարել ու դրել շրջանառութեան մէջ: Բարեբախտաբար, հեղինակային բուն օրինակը կամ հէնց նրան յանգող մի արտագրութիւն եւս դարեր անց հասել է Բ ձեռագրախմբի K_b ենթախմբի նախագաղափար օրինակի գրչին եւ գուգագիր օգտագործուել նրա կողմից:

Ընթերցումների ամբողջական համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Ee_2 խմբից բացի, դասական համակարգման յատկանիշներ ունեցող ԱԲ ձեռագրախմբերից անկախ լինելու որոշակի նշաններ առկայ են նաեւ օձնեցիական բնագրերի ակնյայտ համառօտումներով եւ ուշ կանոնական երկերի (Դաւիթ Ալաւկաորդու եւ այլն) յաւելումով բնորոշուող ձեռագրերի մի խմբում (համաձայն Ս. Տիգրանեանի՝ D)՝ իր երկու ենթախմբերով (առաւել համառօտը, որ ներկայացուած է 1285 թ. ընդօրինակուած,

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի հ^մ 274 եւ ԺԶ.-ԺԷ. դարերի՝ ՄՄ հ^մ 648, 3562 գրչագրերում, շուտով հրատարակուելիք մեր բնագրում նշանակել ենք *d*₁ տառանիշով, իսկ *D*-ով՝ ԺԶ.-ԺԷ դդ. ՄՄ հ^մ 649, 650, 651, 658, 2964, 3369, Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հ^մ 345, 2175 եւ Վիեննայի Մխիթարեանների հ^մ 100, 297 գրչագրերի ենթախումբը): Այս խմբի ընթերցումները միջանկեալ դիրք են գրաւում, քանի որ յանգում են Ը դարի սկզբնօրինակի բաւականին «մեծ» խմբագրման արդիւնքում ի յայտ եկած մի մայր օրինակի, որից հետագայում ծագել է նաեւ «դասական» խմբագրութիւնը: Այդ «մեծ» խմբագրման ժամանակ է «Կանոնագիրք Հայոց»-ը լրացուել Յովհաննէս Օճնեցուց յետոյ ստեղծուած կանոններով (առաջինը Հայոց Սիոն Բաւոնացի կաթողիկոսի կանոններն են՝ ընդունուած 768 թ. Պարտաւի եկեղեցական ժողովում):

Երկրորդը՝ «դասական» խմբագրութեան Ա եւ Բ ձեռագրախմբերում «Վերջնոյ Սահակայ» անուանումը պաշտօնաւոր կանոններն են, որոնք *Dd*₁ համառօտուած խմբում կորցրել են առաջաբանը եւ մեզ համար առայժմ անհասկանալիօրէն վերագրուել Մովսէս Քերթոզահօրը: Դասական խմբագրումն իրագործողները որպէս այդ կանոնների հեղինակ ընկալել են Սահակ Զորոփորեցի կաթողիկոսին (678-703 թթ.⁷), ուստի դրանք տեղադրել են Յովհաննէս Օճնեցու կանոնախմբից առաջ (Ա-ում եւ Բ-ում համապատասխանաբար՝ 23-րդ եւ 36-րդ տեղում): Սակայն յաջողում է պարզաբանել, որ իրականում այդ հեղինակը Տալքի վտարանդի եպիսկոպոս Սահակն էր՝ յայտնի իր «Մոռուտ» եւ «Ապուկուրեշ» (իմա՝ «Էպիկուրեան») մականուններով: Նա էական դերակատարում ունէր դաւանական խնդիրների քննարկումներում Թ դ. երկրորդ կէսին՝ Զաքարիա Զագեցի կաթողիկոսի օրօք, եւ վերջինիս վախճանից յետոյ, ըստ ամենայնի, տեղապահի կարգավիճակով տնօրինել է հայրապետական աթոռը (մինչեւ Գէորգ Գառնեցու ընտրութիւնը 877 թուականին), ինչի հետեւանքով, «Վերջնոյ Սահակայ» կանոններից բացի, «Հայոց կաթողիկոս» է անուանուել նաեւ «Գիրք թղթոց»-ում պաշտօնաւորած իր «Բացայայտութիւն» երկի⁸ վերտառութեան մէջ («Բացայայտութիւն

⁷ Այս ժամանակագրութեան առաջին թուի ճշման մասին (փոխանակ՝ 677-ի) տես **Ա. Աкопян**, О хронологии последних событий в «Истории 684 года», «Кавказ и Византия», вып. 6, Ереван, 1988, էջ 33-34:

⁸ Նրա հրատարակութիւնը տես «Գիրք թղթոց. Մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901, էջ 413-482. **Սահակ Վարդապետ (Մոռուտ)**, Բացայայտութիւն, [իրատ.՝ Ն. արք. Պողարեան], Երուսաղէմ, 1994 (ի դէպ, աշխատասիրողը էջ 04 եւ 1-ում իբրեւ «յետ-

Համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց ըստ առաքել-
լասահման աւանդիցն եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատաբանու-
թեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց, ասացեալ
սրբոյ վարդապետին Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ մեծի թարգմանչի
ընդդէմ երկաբնակաց նեստորականացն») եւ այլուր: Սահակի կանոննե-
րը Թ. դ. վերջերին վերագրելու անհրաժեշտութիւնը փաստուած է նաեւ
բնագրի լեզուաոճական առանձնայատկութիւնների (է դարի երկերին
բնորոշ, այսպէս կոչուած «յետդասական» գրաբարից էական տարբերու-
թիւնները), ակնյայտ ուշ բառագանձի եւ բովանդակութեան որոշ տար-
րերի քննութեամբ (օր.՝ առաջաբան-երկրորդ վերնագրի՝ հարցումներով
Սահակին դիմած Յովհանն «[...] քաղաքից», թերեւս, նոյնանում է կա՛մ
Զաքարիա Զագեցու մօտ Փոտ պատրիարքի կողմից ուղարկուած Նիկէ
թրակիական քաղաքի միտրոպոլիտի, կա՛մ Անտիոքից եկած Նանա Ասո-
րի վարդապետի հետ)⁹:

Դասական խմբագրումն իրագործողների նշուած սխալը հետագայում
կրկնել են նաեւ ուսումնասիրողները, ովքեր Սահակ Վերջինի կանոննե-
րի ընդգրկումը «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյում վերագրել են Յով-
հաննէս Օձնեցուն՝ առանց ուշադրութեան առնելու այն հանգամանքը, որ
վերջինս իր «Սակս ժողովոցն» երկում Սահակ Զորոփորեցուն համարում
է (անկախ դրա իրաւացիութիւնից) եզր Փառաժնակերտցի կաթողիկոսից
սկսուած քաղկեդոնամէտ դիրքորոշման կրող, ուստի ոչ մի պայմանով չէր
կարող նրա հեղինակած որեւէ երկասիրութիւն պահել իր ժողովածոյում:

Նոյնանման համեմատութեան շնորհիւ նաեւ բաւարար փաստարկում
է ի յայտ գալիս՝ համարելու, որ օձնեցիական «Կանոնագիրք Հայոց»-ին

սամուտ սխալ յաւելում» փակագծի մէջ է վերցրել «Հայոց Կաթողիկոսի եւ մեծի թարգ-
մանչի» «բացատրութիւնը», սակայն դա շտապողական ենք համարում). **Սահակ Մոռու**,
Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց..., առաջ. եւ
բնագիրը՝ **Յ. Քէսէեանի**, «Մատենագիրք Հայոց», հտ. Թ, Թ դար, Անթիլիաս, 2008, էջ
361-364, 373-423:

⁹ Առաւել մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, Թ դարի «չկայացած» Հայոց կաթողիկոս
Սահակ Մոռու Տայեցին եւ նրա կանոնախումբը «Կանոնագիրք Հայոց»-ի դասական
խմբագրութեան մէջ, «Պատմական Տայք. պատմութիւն, մշակոյթ, դասանք», 22-24
հունիսի 2016, [Միջազգային գիտաժողովի] հիմնադրոյթներ, Երեւան, 2016, էջ 13-16. Նոյն
հեղինակի՝ «Սահակ Մոռու վարդապետի «կաթողիկոսութեան» խնդրի շուրջ», «Հանդէս
ամսօրեայ», ՃԼ տարի, Վիեննա-Երեւան, 2016, սն. 38-56: Հմմտ. **Մ. արք. Օրմանեան**,
Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, § 670, սն. 1137-1138. **Л. Меликсет-Бек**, К
вопросу о датировке Псевдо-Исааковых памфлетов в греко-византийской литературе,
В кн.: **Л. Меликсет-Бек**, Источниковедческие заметки, составил и редактировал П.
Мурадян, Ереван, 2010, էջ 47. **Պ. Անանեան**, Զաքարիա Հայոց կաթողիկոսի եւ Աշոտ
իշխանաց իշխանի թղթակցութիւնը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա. պապի հետ,
Վենետիկ – Ս. Ղազար, 1992:

Հետագայում է աւելացուել E գրչագրում բացակայող, իսկ «մեծ» (այդպէս նաեւ «դասական») խմբագրութիւնում առկայ երրորդ՝ «Ներսէս կաթողիկոսի եւ Ներչապհոյ» կանոնախումբը: Իր «Սակա ժողովոցն» երկում Յովհաննէս Օձնեցին բաւականին մանրամասն անդրադառնում է Ներսէս Բ Բագրեւանդցի կաթողիկոսի (548-557 թթ.) գործերին, ընդ որում նրա կողքին յիշատակում է միայն Ջ դ. կէսերի դաւանական խնդիրներում լուրջ դեր խաղացած Սիւնեաց Պետրոս Քերթող եպիսկոպոսի անունը: Դրանից էապէս տարբերւում է նշուած կանոնները ժողովածոյում ընդգրկած խմբագրողի մօտեցումը, որը վերնագրի տակ ծանօթագրել է միայն Ներչապուհի մասին («Այս կանոնք եղան յաւուրս Ներսէսի կաթողիկոսի եւ Ներչապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի»):

Հէնց «մեծ» խմբագրութեան համառօտուած Dd_1 խմբում հեղինակային 32 կանոններից առաջ «Երանելոյն Յովհաննու Իմաստասիրի» վերտառութեամբ մասնակիօրէն պահպանուած լինելն է թոյլ տալիս նկատել, որ «Կանոնագիրք Հայոց»-ի սկզբնօրինակում եղել է նաեւ վերը նշուած «Ատենաբանութիւն» գրութեամբ, որը Յովհաննէս Օձնեցու երկերի՝ Գրիգոր Վկայասէրի կազմած հաւաքածոյում եւս (մեզ հասած՝ Արմենի լեռան Յովանիսի վանքում 1298 թ. կատարուած արտագրութեամբ եւ տպագրուած 1833 թ. Վենետիկում) նախորդում է 32 կանոններին: Իրար յաջորդող այդ երկերի միջեւ մասնագէտների կողմից ցայսօր չնկատուած բովանդակային ուղիղ կապ է մատնանշում ժԹ կանոնում առկայ բառացի յղումը մի «Առաջաբանի» («Եւ զսոցուն խորհուրդն յԱռաջարանի անդ հաւաստեալ յայտնեցաք»), որը, անկասկած, հէնց «Ատենաբանութիւնն» է՝ իր ԺԳ գլխով: Բուն գլխի բնագիրը մեզ չի հասել, քանի որ Վենետիկի ձեռագրում թերթի կորստի պատճառով պակասում է բնագրի մի մեծ կտոր (Ժ գլխի վերջից մինչեւ ԺԴ-ի սկիզբը), սակայն Գրիգոր Վկայասէրի կազմած գլխացանկում ԺԳ գլխի վերնագիրը պարզորոշ ցոյց է տալիս ժԹ կանոնում յղուած տեղը: Ընդ սմին E գրչագրում թէպէտ չի պահպանուել այս «Ատենաբանութիւն-առաջաբանի» բնագիրը, սակայն, բարեբախտաբար, պահպանուել է նրա ընդարձակ վերտառութիւնը՝ իբրեւ Յովհաննէս Օձնեցու կանոնների վերնագիր («Երանելոյն $[V_0]$ Երանելոյ» տեառն Յովհաննու $[V_0]$ Յովանիսի փիղոսոփայի) Հայոց կաթողիկոսի. Յառաջին կենցաղն $[V_0]$ կենցաղն իւր] եւ գալ նորա $[V_0]$ ի գալն] յաթոռ քահանայապետութեան եւ $[V_0]$ հայրապետութեան եւ հաստատել] բազմապատիկ եւ զանազան կարգս (V_0 կարգս եւ կրանս) եկեղեցւոյ հաստատեալ $[V_0]$ աստ չիք հաստատեալ])»:

Ե գրչագրի եւ Dd_1 համառոտուած խմբի բովանդակութիւնների համադրումից երեւում է, որ Բագրատունեաց թագաւորութեան շրջանում Յովհաննէս Օձնեցու ժողովածոն հարստացուել է ոչ միայն Ներսէս Բ Բագրեւանդցի կաթողիկոսի, Սիոն Բաւոնացու (Պարտաւի ժողովի) եւ Սահակ Վերջինի կանոնախմբերով, այլ նաեւ յունարէնից ակնյայտ յունաբան ոճով թարգմանուած¹⁰ կանոնական նոր բնագրերով՝ Անտիոքի, Լաւողիկէի եւ Սարգիկէի (առաջիններն արդէն լիարժէք ծաւալով) եկեղեցական ժողովների կանոններով: «Մեծ» խմբագրումն իրագործողները նաեւ առանձնացրել են Ե դարում «Առաջին Նիկիական» անուան տակ միաւորուած չորս ժողովների կանոններն ու դրանք օժտել առաջաբաններով, որոշ կանոնախմբեր բաժանել են յօդուածների (Սահակ Պարթեւի թղթերից՝ գոնէ հինգերորդը), կատարել են էական համառոտումներ եւ առաջաբանային յաւելումներ միւսներում, ինչպէս նաեւ դուրս են թողել Գրիգոր Լուսաւորչի, Բարսեղ Կեսարացու, Յովհան Մանդակունու կանոնական մէկական թղթեր եւ Յովհաննէս Օձնեցու «Նախահաւաքումն պատմութեան»-ը (Յիշատակարանը, գուցէ նաեւ ոչ միայն այն, հաւանաբար, պարզապէս բացակայել է ձեռքի տակ եղած օրինակում)¹¹:

Ինչ-որ ժամանակ անց այս «մեծ» խմբագրութեան մի ամբողջական օրինակի վերջում աւելացուել են 5 նոր կանոնախմբեր (Մակար Երուսաղէմացու, Գրիգոր Աստուածաբանի, Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի, Դուինի 645 թ. եւ Աղուէնի ժողովների), կատարուել է խմբագրական որոշակի աշխատանք (միացուել են Սահակ Պարթեւի կանոնական հինգ թղթերը, Բարսեղ Կեսարացու երկերից երկուսը, գլխացանկերում յօդուածների վերնագրերը շարադրուել են ընդարձակ), իսկ այնուհետեւ իրագործուել է նաեւ ստացուած 40 կանոնախմբերի նոր, «դասական» համակարգումը՝ յօդուածների ընդհանուր համարակալմամբ եւ նրանց ընդհանուր ու առարկայական ցանկերի կազմումով: Որ նշուած 5 կանոնախմբերն օձնեցիական ժողովածոյ չեն մտցուել արդէն «մեծ» խմբագրման ժամանակ (միգուցէ յետոյ պարզապէս կրճատուել են մեզ հասած Dd_1 խմբում), երեւում է նրանից, որ «դասական» խմբագրութեան թէ՛ Ա ձեռագրախմբում, թէ՛ Բ-ում դրանց մեծ մասը, թէպէտեւ տարբեր հերթականութեամբ, դասաւորուած է վերջին տեղերում (համապատասխանաբար՝ 35-36, 38-39-րդ եւ 35, 39-40-րդ):


¹⁰ Հմմտ. Մ. Շիրիսեան, Գ. Մուրադեան, Յունարէնից թարգմանուած եկեղեցական կանոնները, էջ 213-225:

¹¹ Մանրամասն տես Ա. Յակոբեան, Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԱ տարի, Վիեննա-Երեւան, 2007, սն. 213-256:

Դասական խմբագրութեան առաջացման ժամանակի ստորին սահմանը ճշտում է Մակար Երուսաղէմացու եւ Աղուէնի ժողովի կանոնախմբերի (այդպէս նաեւ Աղուանից Վաչագան արքայի անուան)՝ Անանիա Մոկացի կաթողիկոսին (941-967 թթ.) յայտնի չլինելու մասին դիտարկման շնորհիւ: Ինչպէս իրաւացիօրէն նկատել են բոլոր ուսումնասիրողները, Մակար Երուսաղէմացու կանոններում ամենից ուղղակի կերպով են ներկայացուած հոգեւոր դասերի աստիճանակարգի եւ իրաւասութիւնների վերաբերեալ Անանիա Մոկացու դիրքորոշման հիմնաւորումները, ու հնարաւոր չէ գտնել որեւէ պատճառ, թէ ինչպէս նա, իր գիտնական-ընդդիմախօս խոսքով Անձեւացի եպիսկոպոսին համոզելու ջանքերում յղումներ անելով «Կանոնագիրք Հայոց»-ի 12 կանոնախմբերին (դրանց յանուանէ յիշատակումներով), կարող էր «վրիպել» այդ մէկը, եթէ այն արդէն ընդգրկուած լինէր իր ժամանակ չըջանաւորող ժողովածոյում: Յաջորդ՝ Վաչագան Աղուանից արքայի կողմից գումարուած Աղուէնի ժողովի կանոններին անծանօթ լինելու առնչութեամբ կարելի էր նաեւ այն գուշակօրէն իրողութիւնը, որ «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» անուանուած թղթում շարադրելով «Աղուանից պատմութեան» առանցքային դրուագները՝ Անանիա Մոկացին դարձեալ չի յիշում Վաչագան Բարեպաշտի անունը: Այս փաստերը բաւարար են թուում, որպէսզի Մակար Երուսաղէմացու կանոնները «Կանոնագիրք Հայոց»-ի գիտական տեսադաշտում յայտնուած համարուեն միայն շնորհիւ Անանիա Մոկացու օրօք խոսքով Անձեւացու գաղափարների դէմ երկարատեւ բանավէճում դրանց արժեւորման (գուցէ՛ այդպէս նաեւ Գրիգոր Աստուածաբանի կանոնախումբը), իսկ Վաչագան արքայի (Աղուէնի ժողովի) կանոնները՝ խաչէն այցելած ժամանակ տեղի ձեռագրապահոցում Հայոց կաթողիկոսի արդիւնաւէտ պրպտումների շնորհիւ (գուցէ՛ այդպէս նաեւ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի՝ նոյն Վաչագան արքային ուղղուած կանոնական թուղթը)¹²:

Անանիա Մոկացու թղթերում յիշատակուած կանոնագրքային հատուածների քննութիւնից երեւում է նաեւ, որ նա օգտագործել է ժողովածոյի ոչ թէ «մեծ» խմբագրութեան, այլ Յովհաննէս Օձնեցու համախմբած դեռեւս նախնական տարբերակը: Հեղինակի յղած Նիկիայի կանոնների «մետասանբորդ» գլխահամարը համապատասխանում է «Առաջին Նիկիական» կանոնախմբի՝ E գրչագրում եւ e₂ ենթախմբում պահպանուած տարբերակին, որը հաւաքածոյ էր ինչպէ՛ս բուն Նիկիայի, այնպէ՛ս եւ

¹² Տես անդ:



ԱՐԱՅԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ

- ☐ Պահպանումած ձեռագրերը
☐ Վերականգնուող մայր գրչագրեր
☐ Գրչագրերը եւ վերականգնուող
 մայրերը օգտագործուած են
 մեր համեմատութիւններում
 E*P* ... Նոյնանուն տառանիշեր Վ.Յակո-
 բեանի հրատարակութիւնում
 _____ Անսիշական ծագումը յստակ է
 Անսիշական ծագումը յստակ չէ
 ↴ Այտագրելիս գրչագիրը համ-եղ են

[illegible]

	E, e1	e2	D	d1	Kabh (Kb/ Kan)	A, B
28.	Ինքնանշանություն Յովիաննու Հայրը կաթ-ի («Ամենաբ- իւն») [= D 31.] [ով վերն-մ]		Մեծիւ երանելւն Սահակայ [Բ] [= E 20.]	Նորին Յովաննու կանոնը [= E 29.]	Կիւրորի Արքեանորդացույ [= E 31.]	Ամսորդայ Բ [= E 9.]
29.	ԻԲ Յովիաննու «Ամսորակ- ւոյ»[= Օսկեցոյ] [= AB 24.]		Սահակայ կաթորիկութի [Գ] [= E 21.]	Սիմոն կաթորիկութի (Պարտաւաւի)	Սահակայ հայրապետի (ԱԲ) [= E 19-23.]	Եպրեմի Խորին Սարույ [= E 32.]
30.	Նահանաապումն պատ- մութեան այսմ բանից Յովիաննու Վերծանաւորի		Շահապիկանի [= E 25.]	<i>Ս-ն Եպիֆնի ի կա-</i> <i>նոնս գրոց [= Ksbh 41.]</i>	Սահակայ կաթորիկութի զիր աամարութեան [= E 24.՝ իով վերնագրով]	Կիւրորի Արքեանոր- դացույ [= E 31.]
31.	Կիւրորի [= AB 30.]		Երանելոյն Յովաննու (Օսկեցույ) [= E 28.]	<i>Ս-ն Եպիֆնի ի մնացոր-</i> <i>դական (ճ յոր.) [= D 20.]</i>	Միսրան Դայրց (Շահապիկանի) [= E 25.]	Եպիֆաննու Կիւրորացույ [= E 33.]
32.	Եպրեմի [= AB 29.]		Նորին Յովաննու կանոնը [= E 29.]	<i>Բաւորեմի Կանն ախ-</i> <i>պեւ... (ԷԶ յոր.) [= E 14.]</i>	Թորոթ Սեւանդեայ (Եպիֆանի Բ) [= E 18.]	Եպիֆնի կաթորապետի [= E 34.]
33.	Եպիֆաննու [= AB 31.]		«Արդեսի Բերթոր» > (= Սահակայ Վերջնոյ)	<i>Կանոնը</i> <i>ժամանորայի</i>	Ամսորդայ Բ [= E 9.]	Խոստովանութեան Ամսորդայ [= E 17.]
34.	Եպիֆնի մարդիկ կանոնաց ապացեալ Է [= AB 32.]		Սիմոն կաթորիկութի (Պարտաւաւի)	<i>Սիրոց կաթոր-աց</i> <i>կիրացոց զգուշաւորը</i>	Յովիաննու Սանրակնոյ Կանոնը [= E 26.]	Սիկնոյ Բ [= E 7.]
35.	[+ K6 47.]		<i>Կանոնը</i> <i>ժամանորաց</i>	<i>Դաւիթ</i> <i>Ավակաբորդ</i>	Աբրահամ Սամիկունեց	Վաչագանայ... Արդեսի ժողովոյն
36.			<i>Սիրոց կաթոր-աց</i> <i>կիրացոց զգուշաւորը</i>		Վերջնոյ Սահակայ [= Սուրբն Բերթորիսար]	Բարսութ Վասն պեւ- պեւ ախտից... [= E 13.]
37.			<i>Դաւիթ</i> <i>Ավակաբորդ</i>	Յակոբ Ղրիմեցույ	Յովիաննու Խնատասիրի [Օսկեցոյ] Կանոնը [= E 28.]	Ղրիմորի Ամսորածարանի
38.			<i>Ս-ն Եպիֆնի առ</i> <i>ի իորսոս [= Ksbh 41.]</i>		Սիմոն կաթորիկութի (Պարտաւաւի)	Դևայ ս. ժողովոյն
39.			<i>Տիստոսի առաքելոյն</i>		Վաչագանայ... Արդեսի ժողովոյն	Սանրայ Երուսաղէմացույ
40.			Յակոբ Ղրիմեցույ		Դըւայ ս. ժողովոյն	Սահակայ կաթ-ի զիր աամարութեան [= E 24.]
41.				դ) Եպիֆաննու [ԼԸ]	<i>Ս-ն Եպիֆնի ի կանոնական գրոց</i>	<i>Յովիան Սանրոյ [Բ]</i>
42.				ե) Կիւրորի Արքեան- ոյ	<i>Եպֆ (Նիկիոյ, Վե-</i> <i>սադիոյ, Մեծ Դայրց,</i> <i>Կանն, Երուս., Պրոսի</i>	Կարնոյ ժողովոյն
43.				զ) Եպրեմի Ասորոյ	<i>Յակորայ առ Կորդ.</i>	Ներսիսի հայրապա- ի
44.				է) Սահակայ կաթ-ի	<i>Եպիֆաննու [Գ]</i>	<i>Յովի Սանր-ոյ [Գ]</i>
45.				ը) Շահապիկանի	<i>Եպ-բ (Երուս., Պրոսի,</i> <i>Սեւեաք Դայրց, Կանն,</i> <i>Նիկիոյ) [Կ- ում բաց]</i>	Ղրիմիկոսի կթեցելոյ
46.					<i>Մեւորդկայ</i>	Եպիֆաննու [Բ]
47.		ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽՆԵՐ			Յիշատակարան Յովիաննու Խնա-րի	Յովիաննու Երուսաղէմացույ
48.		<i>e2 խմբի եւ e1 գլխագրի ունեցած</i> <i>կանոնախմբերը Է-ի համեմատ</i>				Դիպրիտայ
49.						Նէկրանեայ Դողկնայ
50.						Մերիտունի Եպ-ի
51.						Աթանասի [Բ]
52.						Սեբեդիանոսի
53.						Սուրբատայ
54.						Ղրիմիկոսի Արիսպ-ոյ
55.						Սանտոնի
56.						Կրեմայ Դողկնայ
57.						Կոյ ապաշխ 3 Սանդ-ոյ
58.						Սիմոնի Արդանից
59.						Կաթ-ի [սիւայն B-ում]
60.	(= 60. - 72.)					

Անկիւրիայի, Կեսարիայի եւ Նէոկեսարիայի կանոններից՝ 50 յօդուածով (Յովհաննէս Օձնեցու «Սակա ժողովոցն, որ եղեն ի Հայս» երկում «Նիկիայ սուրբ ժողովոյն» կանոնների թիւը 51 է նշուած՝ «տունս ԾԱ»), եւ որը միայն «մեծ» խմբագրման ընթացքում յետ բաժանուեց ըստ առանձին ժողովների (իսկ բուն Նիկիոյ կանոնների համար յունարէնից նորովի թարգմանուեցին առաջաբանը, վերջաբանը՝ Կոստանդինոսի նամակը, եւ մասնակիցների ցուցակը): Անանիա Մոկացու միւս յղումը (ցաւօք, առանց յօդուածահամարի նշման) տրուած է՝ «Նէոյկեսարեայն, որ եւ այն Նիկիա անուանի» ձեւով (նոյն կերպ է նա արտայայտուել նաեւ Նիկիոյ Բ կանոնների մասին՝ «Կարճառոտի կանոնաց, որ եւ այն կոչի Նիկիայի՝ ԻԱ գլխոյն»), ինչից հետեւում է, որ նրա ձեռքի տակ եղած «Կանոնագիրք Հայոց»-ի օրինակում Նէոկեսարիայի (իմա՝ Անկիւրիայի. տուեալ դէպքում Անանիա Մոկացին ինչ-որ շփոթութեան մէջ է ընկել) կանոնները եւս անուանուած են եղել «Նիկիական»: Պարզ է, որ այդ օրինակում Նիկիայի Ա կանոնախմբի կազմում եղել են ե՛ւ Նէոկեսարիայի, ե՛ւ Անկիւրիայի կանոնները, թէպէտ միաժամանակ յայտնի է եղել, որ դրանք առանձին միաւորներ են, ինչպիսին որ էին նաեւ Բ Նիկիական՝ «Կարճառոտի կանոնները» (ե դարում Նիկիայի, Անկիւրիայի, Կեսարիայի, Նէոկեսարիայի, Գանգրայի, Անտիօքի եւ Լաւոզիկէի ժողովների կանոններից կազմուած հաւաքածոն՝ 116 յօդուածով): Սա ցոյց է տալիս, որ Անանիա Մոկացու ժամանակ գոնէ նախնական ձեւով արդէն սկսուած էր յունարէն բնօրինակների հետ Յովհաննէս Օձնեցու հաւաքած նիւթերի համեմատման այն աշխատանքը, որի հիման վրայ ի վերջոյ իրագործուեց «Կանոնագիրք Հայոց»-ի «մեծ» խմբագրութիւնը:

Որ վերջինիս իրագործումը, այնուամենայնիւ, տեղի է ունեցել առաւել մեծ հաւանականութեամբ Անանիա Մոկացուց որոշ ժամանակ անց, երեւում է՝ տոմարագիտական ճշտուած հիմքերով 982 թ. իր «Հայոց պատմութիւն»-ը շարադրած Ուխտանէսի¹³ կողմից Կոստանդինոսի թագի մասին նովելում հրեշտակների՝ կայսերը սպասաւորելու առիթով «Կանոնագրքի» յղումից («...այսմ վկայի Գիրք կանոնացն Նիկիայ»): Պատմիչի նշած տեղը պահպանուել է Նիկիական կանոնների միայն E, e₁ գրչագրերի եւ e₂ ենթախմբի տարբերակում (E-ում՝ Նիկիական երկրորդ կանոնների, իսկ e₁-ում եւ e₂-ում, որոնք չունեն այդ կանոնախումբը՝ Առաջին

¹³ Տե՛ս Ն. Ակիսեան, Բանասիրական հատակոտորներ. 3. Երբ գրած է Ուխտանէս իր Պատմութիւնը, «Աւետիք», Բէյրութ, 1944, թիւ 5-8, էջ 57 (իմմտ. Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, աշխարհ. թարգմ. եւ ծանօթ.՝ Վ. Առաքելեանի, Երեւան, 2006, էջ 17:

Նիկիականի վերջում)։ «...զի հրեշտակ Աստուծոյ դնէր զԹագ ի գլուխ նորա այգուց այգուց»։ Դրանից բխում է, որ (եթէ, իհարկէ, ծանրակշիռ յատուկ հիմքեր չյայտնաբերուեն՝ Ուխտանէսի յղումը բառացի արտագրուած համարելու նրա տուեալ գլխի աղբիւրից, որը Շապուհ Բագրատունու՝ աւելի վաղ ստեղծուած եւ մեզ գոնէ իր նախնական վիճակով չհասած երկն է) «Կանոնագիրք Հայոց»-ի նախնական, չխմբագրուած տարբերակի շրջանառութիւնը հասել է մինչեւ ժ դարի 80-ական թթ., ուստի նրա «մեծ» խմբագրման աւարտը հնարաւոր է վերագրել միայն այդ դարի վերջին¹⁴։

Ինչ-որ ժամանակ անց «մեծ» խմբագրութեան հիման վրայ ստեղծուել են դասական համակարգման տարրերը՝ ընդհանուր յօդուածահամարակալում, ընդհանուր եւ առարկայական ցանկեր պարունակող երկու (Ա եւ Բ ձեռագրախմբերի) տարբերակներ. պահպանուել են առաջինի բաւականին վաղ՝ 1098 թուականի (Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի հ^ր 131 – A) եւ ԺԳ դարի (ՄՄ հ^ր 6409 – B) ընդօրինակութիւնները եւ դրանց յանգող երեք տասնեակից աւելի ձեռագրեր, որոնցում վերը նշուած 40-ին արդէն յաւելուած են 17-18 նոր կանոնախմբեր. երկրորդի չորս տասնեակից աւելի ընդօրինակութիւնները բաժանուում են երեք ենթախմբերի (պայմանականօրէն՝ K_α , K_β , K_γ), որոնցում եւս յաւելուած են համապատասխանաբար՝ 32, 7 եւ 19 կանոնական նոր բնագրեր)։ Դրանցում կանոնախմբերի դասաւորութեան եւ ընթերցումների ուշադիր համեմատութիւնը Ee_1e_2 եւ Dd_1 խմբերի բնագրերի հետ թոյլ է տալիս մերժել որոշ ուսումնասիրողների այնպիսի պնդումները, թէ «դասական» խմբագրութեան ձեռագրախմբերից որեւէ մէկը ծագել է միւսից։ «Մեծ» խմբագրումից յետոյ լրամշակուած (40 կանոնախմբով) մայր օրինակի յանգող եւ դասական համակարգման միանման տարրերով օժտուած, սակայն կանոնախմբերի դասաւորութեամբ եւ ընդհանուր յօդուածացանկերով միմեանցից էապէս շեղուող այդ երկու տարբերակներն ի յայտ են եկել, ըստ ամենայնի, մի այնպիսի իւրայատուկ իրավիճակում, երբ ընդհանուր նպատակադրումը կամ գուցէ անգամ ուղղակի պատուէրն իրագործուել է երկու տարբեր (արդեօ՞ք հէնց մրցակից)

¹⁴ Առաւել մանրամասն տե՛ս Ա. Յակոբեան, Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին, սն. 246-250, ինչպէս նաեւ՝ A. Hakobian, Les rédactions et les groupes des manuscrits du «Livre des canons arméniens» et le nouvel texte scientifique de Hovhannes Odznetsi, «11-me Conférence Générale de l'Association Internationale des Etudes Arméniennes (Paris, 10-12 Septembre 2008)». Résumés des communications, Paris, 2008, էջ 14-19:

վարդապետական դպրոցների կողմից: Ընդ սմին «մեծ» եւ «դասական» խմբագրումների միջեւ ենթադրելի ժամանակամիջոցը կարող էր նաեւ շատ փոքր լինել. խանգարող փաստեր չկան անգամ՝ այդ խմբագրութիւնները վերագրելու վարդապետների միեւնոյն խմբի աշխատանքի երկու յաջորդական փուլերի: Ուստի, եթէ «մեծ» խմբագրման ժամանակը ենթադրելի է ժ դ. վերջին երկու տասնամեակներին (Ուխտանէսից յետոյ), ապա «դասական» խմբագրման իրագործումը (այլ կերպ ասած՝ ԺԳ դարում դատաստանագրքերի ի յայտ գալուց առաջ Հայոց իրաւական գլխաւոր ժողովածոյի վերջնական համակարգումը) պէտք է վերագրել նոյն դարի վերջին տարիներին կամ ԺԱ դ. առաջին տասնամեակներին, այսինքն՝ Բագրատունեաց Հայոց թագաւորութեան այդ առաւել բարեյաջող՝ Գագիկ Ա արքայի ժամանակաշրջանին:

«Կանոնագիրք Հայոց»-ի սկզբնօրինակի ճշտուած նոր ծաւալը եւ կառուցուածքը թոյլ են տալիս էական սրբագրումներ կատարել Յովհաննէս Օձնեցու նպատակադրման, աշխատառճի եւ ընդհանրապէս աշխարհայացքի ընկալման խնդրում գրականութեան մէջ ձեւաւորուած կարծրատիպերում: Դա յատկապէս վերաբերում է կանոնական բնագրերի հաւաքման ու խմբագրման գործում նրան նախորդած Հայ մատենագիրներին՝ Յովհան Մանդակունու եւ Յովհան Մայրապոմեցու ներդրած աւանդի մասին չափազանցուած գնահատականին, որի հիմքն իրականում եղել եւ մնում է Յովհաննէս Օձնեցուն «Կանոնագիրք Հայոց»-ի դասական խմբագրութեան տարբերակներից մէկի (այն էլ նրա ծաւալի մի մասի) սխալմամբ վերագրուած լինելը:

Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի՝ մեր կողմից պատրաստուած նոր գիտաքննական բնագրին իբրեւ յաւելուած կցուելու են երկի գրչագրերի ծագման ճիշդագրութիւնը ցոյց տուող «Ձեռագրածառը» եւ «Հայոց կանոնագրքի կանոնախմբերի հերթականութեան աղիւսակն ըստ խմբագրութիւնների եւ ձեռագրախմբերի», որոնք տալիս ենք նաեւ ստորեւ: Լիակատար եւ միաձեւ տողատակերի հետ մէկտեղ դրանք հետաքննում են տարընթերցումների ընկալումը եւ թոյլ տալիս իւրաքանչիւր դէպքում յատուկ գնահատել Յովհաննէս Օձնեցու սկզբնօրինակի վերականգնման հաւաստիութեան աստիճանը: Այդպիսով, հնարաւորութիւն է առաջանում մեծացնել ճշգրտութիւնն ամբողջական կանոնախմբերի կամ նրանց առանձին հատուածների ե՛ւ բովանդակային, ե՛ւ աղբիւրագիտական վերլուծութեան ժամանակ:

РЕЗЮМЕ

В исследованиях последних лет мы показали, что оригинальная версия сборника «Книги канонов» Св. Ованеса Одзнеци сохранилась в рукописях Матенадарана и.м. Машицоца (№ 659 и 657, группа рукописей с 35 каноническими материалами). В последствии она потеряла некоторые канонические единицы и обрела другие, превратившись в «классическую» редакцию с общей нумерацией канонических статей и их общим оглавлением (это группы рукописей А и Б с 40 каноническими группами). До нас отдельно дошла также занимающая промежуточное место «большая» редакция (это группа рукописей Dd, вторая половина X века). В ней, в частности, после канонов Католикоса Ованеса Одзнеци была помещена новая каноническая группа – «Каноны Великого ученого Мовсэса», однако ее неправильное название («Каноны последнего [католикоса] Саака») сохранила «классическая» редакция, в которой она помещена перед канонами Одзнеци. «Классическая» редакция «Армянской книги канонов», которая имела 5 новых канонических групп, общую нумерацию и общее оглавление статей, была подготовлена в конце X или в начале XI века.

SUMMARY

In the latest researches we have shown that the original version of the “Book of Canons” preserved in manuscripts № 659 and 657 (group Ee, with 35 canonical groups) of Mashtots Matenadaran (manuscript library) is close to the canonical collection, compiled by St. Hovhannes Odznetsi. Later on, this original version underwent replenishments and reductions and was transformed into a “classical” edition with common numeration of canonical articles and common list of contents (A-B group of manuscripts with 40 canonical groups). The “enlarged” edition has also separately reached us (Dd group of manuscripts, the second half of the 10th century), which has an intermediate position. There is, in particular, a canonical group in it, which stands after the canons by Catholicos Hovhannes Odznetsi and which is called the “Canons of Movses Qert’olahayr”, but its correct name is the “Canons of the Last [Catholicos] Sahak”. This name is preserved in the “classical” edition, where this canonical group stands before the canons by Odznetsi. The “classical” edition of the “Armenian Book of Canons”, which had 5 new canonical groups, as well as the common numeration and common list of contents of articles were prepared at the very end of the 10th or at the very beginning of the 11th century.

